

ԽՈՐՀԻԱԾՈՒԹՅՈՒՆ ԴՍ.ՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱ

Երկու հանգամանք մարդոց շոշափելի սխալանքի մեջ են ձգում. մեկ, երբ պատճառներ են վերագրում այնպիսի հանգամանքների, որոնք պատահած չեն, երկրորդ, երր մի գործի օգտավետ նպատակը չորոշած, նրա զործադրության կերպերի վերա են խոսում:

ՆՊԱՏԱԿ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ

Ա

Ուսուցանել կնշանակե սովորեցնել մի բան, իսկ կրթել կնշանակե վարժել մի բանի մեջ կամ աճեցնել, զարգացնել այն զորությունը, ընդունակությունը, որ արդեն կա անհատի մեջ։ Այն արհեստը, որ կայանում է այդ երկու պաշտոնի ի միասին կատարելումը, ասվում է դաստիարակության։

Մեծ է դաստիարակի գործը, և սրբազն է նորա պաշտոնը, վասն զի ով որ բանական արարածին ձեռք է առնում, նորան կատարելագործելու մտոք, նախ և առաջ հարկավոր է իմանալ, թե «ի՞նչ է նա, ինչպիսի՝ ինչ է, և ինչո՞ւ համար է»։

Մարդը, որ գիտե քննել երկինքը և երկիրը, ծով ու ցամաքը, ո՛չ մի հարց լուծելու համար այնքան չէ դժվարանում, որքան յուր անձին վերաբերյալ հարցին մեջ, թե ի՞նչ է ինքը, ի՞նչ է յուր գոյության նպատակը և ի՞նչ կարող է

լինելու Արդարեա, մի անքննելի արարած է մարդը և մտքի կարողության սահմանից բարձր, բայց անշափ անքննելի է որչափ մի միշտառ և մի հատիկ ավաղը բնության մեջ պատճառ՝ ո՞վ իմացավ և գոցա բուն սկիզբն և վախճանը... Բայց որ այս վերջինների նշանակությունը ավելի հեշտությամբ է լուծում, քան թե յուր, դրա պատճառը ոչ այլ ինչ է. բայց միայն յուր կուրորեն ինքնասիրությունը, որ թույլ չէ տալիս յուր նշանակությունը նույն շափով վճռած տեսնելու վեց հանգամանքը դաստիարակության մեջ մեծամեծ խռովություններ է հարուցանում և դաստիարակներին երկու մասի բաժանում. մեկ մասը քարշում է այս կողմ, մյուսը՝ այն. մեկը՝ առաջ, մյուսը՝ հետ. բայց իսկապես երկոցունց ընթացքն ես չեմ ուղիղ և չեմ հարմարցուցած բնականին:

Մարդը, ըստ ներքնույն, զանազանվում է անասունից յուրանմահ հոգվովը և բանականությամբը: Բանականության սկզբնապատճառը նորա միտքն է, որ է հավաքումն տպավորությանց հարտաքուստ ի ձեռն ներքին և արտաքին զգայարանաց, իսկ հոգին մարմնո կենդանությունն է և նորա սկիզբն ու վախճանը. որ ծագում է աստծուց և դառնում դարձյալ դեպի նաև Ասել է, թե մարդը ունի մարմին, հոգի և միտք և դոքա երեքը ի միասին են կազմում մարդուս ամբողջ գոյությունը: Մարմին առանց կենդանության և մտաց շեղոքական առարկա է: Կենդանություն, առանց մարմնու և մտաց, երեակայելի էակ է: Միտք, առանց կենդանության և մարմնո, չէ ինչ: Մարմին և կենդանություն, առանց մտաց, անրան կենդանի է: Կենդանություն և միտք առանց մարմնու. անիմանալի զորություն է: Միտք և մարմին առանց կենդանության, չէ ինչ: Մարմին կենդանությամբ և մտոք հանդերձ— է մարդ բանական, հանճարո և առաքինության ընդունակ:

Դրանք երեքն ի միասին մի ամբողջություն են կազմում, բայց յուրաքանչյուրի հատկությունը երեսում է, և յուրաքանչյուրը յուր հատկությանը հարմար պահանջմունքներ ունի: Դոցա յուրաքանչյուրի հատկությունը ճանաշելու համար մենք կասենք, որ—

Այն հատկությունները, որոնց մասին կարելի է ասել,—